## 115. ՊՌԱՎԻ ՏՂԵՆ ՈՒ ԹԱՔԱՎԸՆԸՐԸ

*Ըլըմ ա չըմ չի, մի պառավ ա ըլըմ։ Սրա̈ն մի տղա ա ունենըմ։ Էս տղեն ամեն օր սրա յախեն կտրըմ ա, ասըմ ա. «Քյնա̈, թաքավըրերի ախչիկը ինձ մհար ուզի»։*

*Մըերը ասըմ ա. «Ա՛ բալա, խի՞ չես վըեստդ կարպետիտ գյո̈րա̈ մեգյնըմ. մըենք վըհրդի՛, թաքավըրերի ախչիկը վըէրդի՛։ Վըեչ թաքավըրերը քեզ ախչիկ կտա, վըեչ էլ թաքավըրերի ախչիկը քեզ կառնի։ Թաքավըրերի ախչիկը մըեր տուն ու տեղի՞ն դի թամահ անի՞լ, մըեր մալ ու դովլա̈թի՞ն, թե՞ մեր կարողութենին»։*

*Մի օր էլ րուգյունը կյա̈լիս ա տուն, ասըմ ա. «Ա՛ մըեր, քյա̈ցի՞ր թաքավըրերի ըխչկանը նշան տնիլու»։ Ասըմ ա. «Չէ՛»։*

*Սա̈ փետը քաշըմ ա, պռավին ճա̈րթ ու փշուր անըմ։ Էքսի օրը պառավը քշերով վըեր ա կենըմ, քյնըմ թաքավըրերի խնըմըքարի վրա̈ նստըմ։ Կյալիս են թաքավըրերին ասըմ. «Հրե ծըեր խնըմըքարին մի պառավ կա նստած»։*

*Թաքավըրերը ասըմ ա. «Մի քյա̈ցեք կանչեցեք, տենանք՝ էն ի՞նչ ա ուզըմ»։ Կյա̈լիս են պռավին կանչըմ։ Պառավը կյա̈լիս ա, ասըմ. «Թաքավըրեր շա՛ն, ինձ մի տղա ունեմ, ակըեն օր ճա̈րթըմ, փշրըմ ա, ասըմ ա՝ քյնա̈ թաքավըրերի ախչիկը ուզի ինձ մհար։ Ասըմ եմ՝ ա՛ բալա, ախր մենք վըե՛րդի թաքավըրերի ախչիկը վըե՞րդի, խի՞ չես հենց պա̈ն ասըմ, վըեր խելքից մոտիկ ըլի, նա̈ թաքավըրերի ախչիկ, տո̈ւ ախքատ պռավի տղա, վրենը նա̈ իրան ախչիկը կտա քեզ։ Համա ըլետ անգաճ չի տնըմ։ Ըրգյունիս տվել ա ճարթել, փշրել, ասել ա, վրեր էքուց քյա̈ցել չես, քեզ ապանի̈լ դեմ»։*

Թաքավրերը ասըմ ա. «Կըքյնաս, տղիտ կղրգյես՝ կյա իմ կուշտը»։

Պառավը կյալիս ա տուն։ Տղեն ասըմ ա. «Ի՞նչ ասեց»։ Ասըմ ա. «Ասեց, վըեր բուդյունը քյնաս իրան կուշտը»։ Ըրուգյունը էս տղեն կյալիս ա Թաքավրերի կուշտը։ Թաքավրերը ասըմ ա. «Տղա՛, քեզ մի պա՛ն կասեմ, թե կատարեցիր՝ ախչիկս քեզ կտամ, չկատարեցիր՝ կյլոխտ կկտրեմ»։ Տղեն ասըմ ա. «Ասա՛, թաքավրեր ջա՛ն, տեսնամ էտ ի՞նչ ես ասըմ»։

Ասըմ ա. «Փլա՛ն քաղաքի միջովը մի մեծ կյետ ա քյնըմ, էտ կյետի վրա մի մեծ կարմունջ կա, էտ կըմնջի վրա մի փայ հվաքող բոռ կա, մեկ ճաշը փայ ա հվաքըմ, ճաշից եդը փայ ա անըմ, հետո էլ ասըմ ա. «Էս հլա ինձ քիչ ա՛, էս հլա ինձ քիչ ա՛»։ Եթե կրացիր մանաս, թե խի՞ ա հվաքըմ ու փայ անըմ ու խի՞ ա էտ խոսկերն էլ ասըմ, ախչիկս քեզ կտամ, թե չէ՝ կյլոխտ կտրիլ կտամ»։ Էս տղեն ասըմ ա. «Շատ լա՛վ կլի, թաքավրեր ջա՛ն»։

Կյալիս ա տուն, մորը ասըմ ա. «Ինձ մհար ճմփի պաշար շի-նի, թաքավրերը տեղ ա ղրգըմ»։ Ճմփի պաշար ա շինիլ տալի, կապըմ ա շալակը ու ճամփա ա ընգնըմ։

Քյնըմ ա աշխար-աշխար ման կյալի, մըչևը էտ կարմունջը քթնըմ ա։ Տեսնըմ ա, վըեր հրես էտ բոռը էկավ։ Մոտանըմ ա, հետը դրից անըմ, ծանոթվըմ ու հրցնըմ ա, թե՝ խի՞ ես տհե անըմ ու խի՞ ես էտ խոսկերը ասըմ։

Էս բոռը ասըմ ա. «Օխտը սարի քմակին մի մեծ դուզ կա, էն դուզմը մի մեծ կյրեզմանոց կա, էտ կյրեզմանոցըմը էրկու սուրուն մարմարից կյրեզմանաքար կա, մեջտըեղը մի մարթ մի պարկ փրեսկի շլակին, կյլոխը մի բարովն ա տալի, փրեսկին էլ մի, հետո էլ ասըմ ա. «Էս հլա ինձ քիչ ա՛»։ Թե նա ասեց՝ խի՞ ա տհե անըմ, արի ես էլ կասեմ. թե հու չէ՝ ասիլ չեմ»։

Էս խեղճ տղավի աղեն ճամփա ա ընդյնըմ։ Քշեր-ցերեկ կյալիս ա, հացն էլ ա ուրծնըմ, ոտիկքն էլ, մըրոտ, կանաչով-դա-նով կյլոխը պահըմ ա ու քշեր-ցերեկ քյնըմ ա. օխտը սարը անց կենըմ, մեկ հասնըմ ա էտ կյրեզմանոցը ու էտ մարթին քթնըմ ա։ Կյալիս ա տրա կողքին էլ ա նստըմ, դրից անըմ, ծանոթվըմ. մհել սրան ա հրցնըմ, թե՝ խի՞ ա տհե անըմ ու տհե ասըմ։

Էս մարթն էլ ասըմ ա. «Էտ ճամփեննի էնքան կրքյնաս, վըեր էլ էս անասուն ու անդուճախ դուղերը աչկիտ ըեվան վըեչ։ Ընդիան դենը սարերն են էնքան կրքյնաս, մեկ հասնես Սեվ սարը. էտ սա-րի տակին մի մարթ կա՝ լվացկն ա անըմ, պինդ քամըմ ա տեւ

կյա̈լի. «Հե՜յ» անըմ, սարերը ման կյա̈լի ու ըլետ կյա̈լի լվացկն ա անըմ։ Թող նա̈ ասի՝ խի՞ ա տհե անըմ, ես էլ կասեմ, թե խի՞ եմ սհե անըմ»։

Էս տղեն ըտիան ճամփա ա ընգյնըմ, կյալիս ա քշեր-ցիրեկ սոված-ծարավ, էտ դո̈ւզերը կտրըմ ա, հա վըրե՜ չ տուտն ա ըրեվըմ, վըրե՜ չ պուճախը. կյեցի շորերն էլ ա մաշվըմ, տրխըներն էլ, տըհե, նեղութինի միչին անչախ-անչախ կյալիս ա, հասնըմ էտ սարի տակը, էն մարթին քթնըմ ա։ Մոտանըմ ա, ասըմ ա. «Պա̈պի՜ աչողում, հայրիկ»։ Ասըմ ա. «Աստու պա̈րին»։

Ըտի նստըմ ա, տըեսնըմ ա էս մարթը լվա̈ցկն արավ, պինդ քամեց ու «Հե՜յ» արավ. տուս էկավ, դո̈շերը ման էկավ ու ըլետ էկավ, լվա̈ցկն արավ «Հե՜յ», ու տհե սաղ օրը անց կցավ։ Էտ տղեն էտ օրը սըիրտ չի անըմ տրա̈ն հրցնի, թե խի՞ ա տհե անըմ։ Վախըմ ա սա̈ էլ մի ուրուշ տըեղ ղրգյի։ Մնըմ ա ըտի, էտ մարթի կողքին, քշերը իրար հետ հաց են ուտըմ, զրից անըմ. լավ սրա̈ն մոտկանըմ ա։ Էրկու, իրեք օր մնըմ ա, նոր վրա իրեք օրը հրցնըմ ա, ասըմ ա. «Հայրի՜կ ջան, մի պա̈ն հրցնեմ, համա նեղանաս վըեչ»։ Ասըմ ա. «Հրցրո՜ւ»։ Ասըմ ա. «Էսա իրեք օր ա՝ ես ըստի եմ. տու անըիլու գործ չի՞ ունես, մըեննակ է՞տ ա, էտ խի՞ ես տհե անըմ»։

Ասըմ ա. «Քե մատաղ, ամեն մարթ մի գախտնիք ունի իրան սրտըմը, վըեր մնի էլ ա ասըմ չի. մըեռնըմ ա, սրտի գախտնիքն էլ հետը։ Իմ կուշտը շա՜տ շատերը էկել են հրցրել՝ ես ասել չեմ, համա դե վըեր տու էտքան հեռու տեղից ես էկել, էտքան տանջվըել ես, ջա̈հիլ տղա ես, քեզ կասեմ։ Ես լվա̈ցկի տուն ունի, իմ ծըեռի տակին էլ քսան հոքի լվա̈ցկը անողնի. աշխատացնի, տհե լա̈վ ապըրի։ Մի ազիզ օր քյա̈ցել ի բազարը մանկյա̈լ, տըեհա մըրլա̈վ, քու ուզած սիրուն ախչիկ։ Սա̈ սրտիս կպավ, էլ կրացի վըեչ պուկ կյա̈մ. մոտացա, հետը խոսցա, ծանոթացա, ասեցի. «Ինձ կառնե՞ս»։ Ասեց. «Հա, մենակ ես ինչ կանեմ՝ վըրես խոսաս վըեչ»։ Ասեցի. «Լա̈վ, կըի»։ Էտա տրա̈ն առա, մի քանի տարի ապրեցինք, տրա̈նից փըրեք ըեխա ունեցա։ Շա՜տ լա̈վ ինք իրար հետ, շա՜տ սերով։ Մի օր էկա, տըեհա սա̈ իմ պրազնիկ օրվա շորերը հաքել ա ու մըեր տան զաքի ցաքոստըմը վազ-վազ ա անըմ։ Ասեցի. «Ախչի՜, էտ խի՞ ես տհե անըմ»։ Ասեց. «Էս հլա̈ մին, մղեիդ կաց, էլ խոսաս վըեչ»։ Անց կցավ մի քանի վախտ։ Մի օր էկա տուն, ասեցի. «Հաց պի ուտենք»։ Ինչքան հաց կար պիրավ, ստոլին վեր ածեց։ Ասեցի. «Ախչի՜ էսքան հացը խի՞ պիրիր, հիլա էս սուփրի վրինը ուտենք, նոր կպիրես»։ Ասեց. «Էտ էլ էրկու, մնաց մինը, ե-

Թե ինս դսպես վրեն, ընդիան ետը մեխկը քու շլնքին ըլի»։ Մի օր սիրտս փոխինձի խաշիլ ուզեց։ Ասեցի. «Էսօր փոխինձի խաշիլ է-փի՛, ուտենք»։ Ճաշ վախտը էկա տուն, տրեսա խաշիլը էփել ա։ Ա-մանը լըցրավ, պիրավ դրավ դարքս, եղն էլ հըե ն՞ե պուչկավը պիրավ դրավ դարքս։ Ասեցի. «Խի՞, մի աման չի կա՞ր, վըեր մեջս իր ածրել, պիրել, ըա տա շնորք ա՞, վըեր պուչկավըեր պիրիր դրիր դարքս»։ Ասեց. «Էտ էլ իրեք, մեխկը քու շլինքըր»։ Ասեց ու ինքն էլ ընխավ։ Ձեռ կորավ, էն լվացկ անողնիս էլ քըացին։ Մնացի ես մըե-նակ։ Ստիպված ես ըսկսեցի լվացկ անիլը, կըլոխս պահիլը։ Հըե քյնում եմ լվացկը տնըմ, ինքն էլ, ընխեքն էլ ինձ կանչըմ են, ծենեը-նուն ընգամեջս ա ընդլնըմ։ Էտ եմ մտիկ անըմ, տրենըմ եմ օքմրի չիկա։ Մին էն սարիցն ա ծեներնուն կյալի, մին՝ էս, էն սարն եմ քյնըմ՝ դատ չեմ քթնըմ, էս սարն եմ քյնըմ՝ դատ չեմ քթնըմ։ Դրա համար էլ ես է՛ս սարն եմ վազ տալի, է՛ն սարն եմ վազ տա-լի»։

Էտ խեխչ տղեն ըտիան կյալիս ա նտ էն վըեսկին ու կըլոխը կյրեգմանի քարերովը տվողի կուշտը, ասըմ ա. «Հայրի՛կ, քյնացի էն մարթի կուշտը. ասեց, թե սհե՛, սհե՛ պանի մհար, ես վազ եմ տալի էս սարը, էն սարը»։

Սա էլ ասըմ ա. «Քն՛ մատաղ, դե լավ անդաճ տի, ես էլ իմ կլխի դարդը պատմեմ։ Ես մի շատ հայտնի ըաղըդյան եմ ըլել։ Մի տարի կընդյանս ու տասներկու արեկան տղիս թող արի, քյացի սատուրի։ Գործը շատ հարմար ու աչողակ քյնաց։ Շատ ժամանակ անցկըցավ, տուն չի եկա։ Թե վրենց էր ութ տարին անցկըել՝ ես էլ չեմ մտցել։ Ութ տարին անցկցավ, վրա ինըմը եկա տուն։ Քշերվա կիսին եկա տուն, ակոշկիցը մտիկ արի, տըե-հա, մի ջահիլ տղա կնդյանս ճիտ ա արել ու քնել։ Աչկերս տա-ռավ չորսը, էլ մակումս անց չիկըցավ, թե սա իմ տղեն կըլի, տհե բոյով-բուսով, մեծացած, սուրունացած. դյիդի, թե հըա էն տասներկու տըրեկան ըեխենա։ Կտաղածի պըես թուրը քաշեցի ու երկուսին էլ սպանեցի։ Հմի էս օթախն եմ մըտնըմ, ըեխես ման կյալի՝ կա վըեչ, էն օթախն եմ մտնըմ ման կյալի՝ կա վըեչ, ասըմ եմ. «Տըեր աստուծ, վըե՞ղդի կըլի տղես»։ Էտ կես ըշերին քյացի իրան մորը տուն ասեցի. «Ըեխես ըաի չի՞»։ Ասեց. «Բա տանը չէ՞ր»։ Ասեցի. «Չէ՛, մի մարթ կար նըրա ծոցին, էրկուսին էլ սպանել եմ»։ Վըեր տհե ասեցի, տհանը ծվալա տուս տառան ու էկան։ Էսա ըտի կլխի ընդյա, վըեր էտ իմ տղեն ա ըլել։ Սկը-սեցի կլխիս վըեթակիր, մազերս պըռճկիլը։ Համա դե էլ ի՞նչ

օրուտ, պանը պանից անց էր կցել։ Պիրի էրկուսին էլ առոք-փառոք վըրերուինլ տվի։ Լավ թանգանոց նախշուն քարեր վըրերնուն ցցիլ տվի ու էն պիրածս պարկով վըեսկին շլակեցի, էկա էս էրկու քարի ղաթը։ Էն օրեն ղեսը կյլոխս էլ եմ քարերովը տալի. էն պիրած վըեսկին էլ, հետո էլ ասըմ. «էս հլա ինձ քիչ ա՞, էս հլա ինձ քիչ ա՞»։

Էս տղեն ըստիյան էլ կյալիս ա էն կըմընջի վրի քոռի կուշտը, ասըմ ա. «Հայրի՛կ, նհանք ահե՛, ահե՛ ասեցին»։ Սա էլ ասըմ ա. «Քե՛ մատաղ, ես իրեք հարիր ուղտ ունի, նհանցով քաղաքից-քաղաք քրեհով ապրանք տանի, փող աշխատի ու լավ ապրի։ Օրերի մի օր մի մարթ էկավ, ասեց. «Արի՛, ինձ մհար քրեհով ապրանք տեղափոխի»։

Հիսուն ուղտ վըեկալա, քյացի. պեռնեցինք ու ճամփա ընգյանք։ Հմի գյիղըմ չեմ, թե փ՞նչ ա տհանց պեռները։ Վըրեր հասանք մի քոլի մեչ, սա աղաք ընգյավ, ասեց. «Ես էս ճամփին լավ ծանոթ եմ»։ Ես քմակիցը սկսեցի պեռները մտիկ անիլը։ Մտիկ արի, տըեհա քսանհինգ ուղտի պեռը վըեսկի ա. մեկելը ուրուշ ապրանք ա։ Մտկովս անցկցավ մի խայնութին, ասեցի՝ տրան սպանեմ, ինձ մնա էս վըեսկին։ Աղաք ընգյա, էկա, հասա տրան։ Ասեց. «Ախպե՛ր, լավ պան չի մտկըվտ անցկենըմ. էն հինգ ուղտի պեռը քեզ կտամ»։

Բրախեցի, մխելի էլ էկանք։ Ասեցի. «Խի՞ վըրեր չիմ իմն սըըլըմ՝ ի՞նչ ա ըլըմ, պըետկ ա ես սրան սպանեմ»։ Ասեց. «Ախպե՛ր, կյեշութինը լավ պան չի, թող տասը քեզ ըլի»։ Էտա իմ մտկերը փոխիլով, տա փրան պեռները ինձ տալով, հասավ մչէ վերչը։ Ասեց. «Ախպե՛ր, նամարդութին մի անիլ, քսանհինգ պեռն էլ քեզ ըլի»։ Մտքմս ասեցի, «Բա էն քսանհինգը ո՞վ ա դյիղըմ նհանց պեռներըմը ընչեր կա պահած»։ Էլ մտիկ չի արի տրա խոսկերին, թուրը քաշեցի, ուզեցի տրա կյլոխը թռցնեմ։ Տրա ծոցիցը մի հուրհրատին տվող պան տուս թռավ, զաքիս վերընգյավ ու հետս խոսցավ, ասեց. «Ախպե՛ր, ինձ վըեկալ աչկերիտ քսի, տափըի տակին ինչքան վըեսկի կա կըտենաս ու կհանես»։ Հլե տրան վըեկալա, քսեցի աչկերիս թըչէ՝ ճուխտ աչկս էլ քոռացավ։ Նա ուղտերս առավ ու քյնաց։ Ինձ հիլ արավ էտ վուրու-վուրու քոլերի միչին։ Թե ինչ հալով ես հասա էս քաղաքը՝ էլ ասիլու չի։ Էն օրեն դեսը էս կըմշի կլխին փայ եմ հվաքըմ ու ախքատներին փայ անըմ, հետո էլ ասըմ. «Հլա ինձ քիչ ա՞, էս

Դա ինձ քիչ ա»։ Ու խի՞ չի ես էն մարթի ասածին համաձայնվի, խի՞ ես նե՞ նամարդութին ուզի անեմ։

Էտ տղեն ըտիան կյալիս ա Թաքավըրերին չիմ մին-մին պատմըմ, թե մչեվ վրերդի ա քյաշել, ո՞ւմ պտահել, ով ի՞նչ ա ասել։ Խաբավրերը տրենըմ ա, վրեր էս տղեն շատ ղոչաղ, համփերող ադա ա ըլել, շատ նեղութըիննի ա տըհել, ասըմ ա. «Ախչիկս քեզ հա՛ալ ա»։ Ախչիկը տալիս ա տըրան։ Օխտը օր, օխտը քշեր հըրսանիք են անըմ, ուտըմ, խմըմ, քյեփ անըմ։

Նրանք հասնըմ են իրանց մուրազին, տուք էլ հասնեք ձեր մուրազին։

